Ընդունված է՝
Կոլեգիալ կառավարման
խորհրդի նիստին
արձանագր. Թիվ 1
02 02 2017 թ.

Հաստատում եմ՝
ԱԱՊՔ ՊՈԱԿ_ի
ուս.խորհրդի նախագահ՝
_____ Վ.Աբրահամյան
02 02 2017 թ.

ԿԱՆՈՆԱՆԱԿԱՐԳ

<<ԱՐՄԱՎԻՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ա. Արմավիրի արվեստի պետական քոլեջի /այսուհետ՝ ԱԱՊՔ / Ուսանողական խորհուրդը /այսուհետ՝ ՈՒԽ/ Քոլեջի ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական ընրրովի մարմինն է:

բ. ԱԱՊՔ ՈՒԽ –ը ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց հասարակական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

գ. ՈՒԽ-ը գործում է ՀՀ գործող օրենսդրությամբ, հաստատության և սույն կանոնակարգով:

դ. ՈՒԽ-ի կանոնադրությունը հաստատվում է քոլեջի կոլեգիալ կառավարման խորհրդում:

ե. ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական մարմինն է:

զ. ՈՒԽ –ի նիստերը ուսումնական տարվա ընթացքում անց է կացվում երկու ամիսը մեկ անգամ՝ խորհրդի աշխատանքային պլանի համաձայն:

է. Խորհրդի լիազորությունների ժամկետը երեք տարի է: Ընտրություններն անց են կացվում երեք տարին մեկ անգամ՝ սեպտեմբեր ամսին:

2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ա. Ապահովել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը,

բ. քոլեջի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,

գ. մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

դ. պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,

ե. միավորել Քոլեջի ուսանողության ջանքերն ուղղված ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորման նպաստմանն ու կրթական, հոգևոր, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացման ապահովմանը,

զ. կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, աջակցել նրանց սոցիալական վիճակի բարելավմանը,

է. մասնակցել Քոլեջի տարածքում ներքին կարգապահության պահպանմանը:

ը. ուխ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից ու խնդիրներից: Այն համագործակցում է ՀՀ-ում գործող ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ :

3. ՈՒԽ-ի անդամների իրավունքները և պարտականությունները

3.1 ՈՒԽ-ի անդամներն իրավունք ունեն.

ա) մասնակցել Քոլեջի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին՝ ուսանողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող լրացուցիչ աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին,

բ) ներկայացնել կարծիք հաստատության մանկավարժական խորհրդին՝ սովորողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ. առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար,

գ) ստեղծել ուսանողական տարբեր ակումբներ և աջակցել դրանց աշխատանքների կազմակերպմանը,

դ) արձագանքել և իր իրավասությունների սահմաններում ընթացք տալ սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին,

ե) իրականացնել աշխատանքներ սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ,

զ) աջակցել կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի և տնօրինության կողմից ուսանողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը,

է) մասնակցել համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը,

ը) իրականացնել Քոլեջի և սույն կանոնակարգից, ինչպես նաև Քոլեջի ուսանողների հիմնական պարտավորություններից և իրավունքներից բխող այլ լիազորություններ:

թ) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ՈՒԽ-ի աշխատանքների վերաբերյալ

ժ) ընտրել ՈՒԽ-ի նախագահ և քարտուղար իրենց կազմից,

3.2 ՈՒԽ-ի անդամները պարտավոր են.

ա) օժանդակել ՈՒԽ-ի հեղինակության ամրապնդմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը,

բ) ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՈՒԽ-ի կողմից անցկացվող միջոցառումների ծրագրերի մշակմանը և դրանց իրականացմանը,

գ) բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունները,

դ) խուսափել գործողություններից, որոնք կարող են վնասել ՈՒԽ-ի կամ նրա անդամների հեղինակությանը,

ե) հետևել սույն Կանոնակարգին նախատեսված այլ պարտականությունների կատարմանը,

զ) համալրել ՈՒԽ-ի կազմը՝ ուսանողության շարքերից առաջադրելով նոր թեկնածուներ:

3.3 Խորհրդի նախագահը՝

ա / ղեկավարում է Խորհրդի աշխատանքները, վարում խորհրդի նիստերը, ստորագրում ընդունված որոշումները,

բ/ ներկայացնում է Խորհուրդը քոլեջի վարչական մարմիններում և քոլեջից դուրս փոխհարաբերություններում,

գ/ ընդունում է որոշումներ, տալիս հանձնարարականներ և կարգադրություններ, հրավիրում է խորհրդակցություններ և իրականացնում ընդհանուր վերահսկողություն,

դ/ ուսումնական տարվա ավարտին տնօրենին ներկայացնում է խորհրդի գործունեության մասին հաշվետվությունը

3.4 Խորհրդի քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները / որոշումները գրանցվում են ՈՒԽ-ի նիստերի արձանագրություններում/:

4. ՈՒԽ –ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

4.1 ՈՒԽ անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում.

ա) ՈՒԽ-ի որոշմամբ՝ ժողովներից պարբերաբար բացակայելու, հանձնարարված աշխատանքից խուսափելու, որոշումները չկատարելու, կարգապահական խախտումների և Քոլեջի կանոնադրությամբ սահմանված՝ ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքերում:

բ) ուսումնառությունն ավարտելուց հետո,

գ) Քոլեջից հեռացվելու կամ ինքնակամ հեռանալու դեպքում,

դ) իր նախաձեռնությամբ

4.2 ՈւԽ-ի անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումը ընդունում է ՈւԽ-ը: